ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/9»-3

ք.Երևան «02» «11» 2017թ.

<<**ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը**>>, գործելով Հայաստանի Հանրապետության անունից,ի դեմս **վարչության պետ** Ա. Օսիկյանի, որը գործում է վարչության կանոնադրությանհիմանվրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով 'Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել ենհինգօրից ավելի,
2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն; ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է2.467.489,4 (երկու միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր ութսունինը ամբողջ չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդըձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն	,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
Հ/Հ 900011474534	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 01222567
Վարչության պետ՝ Ա. Օսիկյան	Տնօրեն՝ Ա.Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«08»«12» 2017 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԱՊՁԲ-17/9»-ՅԾածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
7	33621220/20	երկաթիաղ + ֆոլաթթու b03ad Գինո-տարդիֆերոնթ/պդ/հ	ՊիեռՖաբրեՄեդիկամենտՊրոդուկտիոն, Էտաբլիսեմենտ Պրոգիֆարմ, ՌուեդուԼիսե, 45500 Գիեն Ֆրանսիա	Երկաթիսուլֆատ, ֆոլաթթու, դեղաձևը. դեղահատերկարատև ձերբազատմամբ,դեղաչափը. 80մգ +0.35մգ	դեղահատ	106,8	**32040**	300	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	300	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
10	33621660/21	շնաձկանլյարդիյուղ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրին հիդրոքլորիդ) C05AX04 Ռելիֆ ուղիղաղիքային մոմիկ	ԻստիտուտոդեԱնջելիՍ.ռ.լ., ԼոկալիտաՊրուլի, 103/ա-50066 Ռեջելո Իտալիա	Շնաձկան լյարդի յուղ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), դեղաձևը.մոմիկուղիղաղիքային, դեղաչափը.60մգ+5մգ	հատ	197	**85104**	432	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	432	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
14	33631120/20	տերբինաֆին d01ae15, d01ba02Լամիզիլ Դերմգել դոնդող 1% 15գ	ՆովարտիսՔոնսումերՀելթՍ.Ա. /դեԼետրազճանապարհ, 1260 Նիոն/ Շվեցարիա	Տերբինաֆին, դեղաձևը.դոնդող, դեղաչափը.10մգ/գ,15գ	հատ	4443	**88860**	20	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	20	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

23	33651123/20	մ j01dd01 Ցեֆոտակսիմ մսրվ. 1գլուծիչով	արմասյուտիկալԳրուպՔո., ՍՊԸ (Գեներալ Ֆարմասյուտիկալ Ֆակտորի, No 109 Հուեֆուռոադ,Նանգանգշրջան, Հարբին) Չինաստան	Ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում), դեղաձևը.դեղափոշիներարկմանլուծույթի, դեղաչափը. 1000մգ, ապակեսրվակև 5մլլուծիչամպուլում	հատ	314	**78500**	250	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	250	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
32	33611440/3	թիամին (թիամինիհիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումականֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսին հիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX Վիտամին B Կոմպլեքս ամպ. 2մլ	Սոֆարմա ԲԸ, Իլիենսկոշոսեփ. 16, 1220 Սոֆիա Բուլղարիա	Թիամին (թիամինիհիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինինատրիումականֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինհիդրոքլորիդ), նիկոտինամիդ,դեղաձևը. լուծույթներարկման, դեղաչափը.5մգ/մլ+1մգ/մլ+5մգ/մլ+50մգ/մլ, 2մլ	սրվակ	138,52	**692600**	5000	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	5000	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
34	33651116/2	ցեֆազոլին j01db04 Ցեֆազոլինն /եևմ/մսրվ. 1գ	"Բորիսովյանբուժպատրաստուկ-ներիգործարան "ԲԲԸ, 64/27, Չապայեվփ., Բորիսով 222120, Մինսկշրջան Բելառուս	Ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում), դեղաձևը. դեղափոշիներարկմանլուծույթի, դեղաչափը. 1000մգ	հատ	157	**314000**	2000	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	2000	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
35	33651126/4	գենտամիցին d06ax07, j01gb03, s01aa11, s02aa14	Զդորովյե ԴեղազործականԸնկերությունՍՊԸ Ուկրաին	Գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ), դեղաձևը.լուծույթներարկման, դեղաչափը.40մգ/մլ,2մլ	սրվակ	60,53	**72636**	1200	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	1200	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

		Գենտամիցի ն ամպ. 4% 80մգ/2մլ									
42	33671130/4	դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 Դիմեդրոլդ/հ 0,05գ	Բելմեդպրեպարա-տիՀՈՒՋ, Գրոդնինսկի, Սկիդել, Կիզևիչփ., 50¶ Բելառուս	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), դեղաձևը. դեղահատ, դեղաչափը.50մգ	դեղահատ	9	**72000**	8000	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	8000	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
50	33691112/4	մետրոնիդազոլ a01ab17, d06bx01, g01af01, j01xd01, p01ab00 Մետրոնիդազոլ լուծույթ 0,5% 100մլ	ՖարմաՏեքՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111 Հայաստան	Մետրոնիդազոլ, դեղաձևը. լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.5մգ/մլ,100մլպլաստիկեփաթեթ	հատ	210	**31500**	150	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	150	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
54	33691124/2	պիրանտել p02cc01 Պիրանտելդ/հ 250մգ	Պոլֆարմ ադեղագործականգործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի¶ Լեհաստան	Պիրանտել (պիրանտելի էմբոնատ),դեղաձևը. դեղահատ, դեղաչափը.250մգ	դեղահատ	194,98	**5849,4**	30	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	30	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
57	33691129/5	նատրիումիքլորիդ, կալիումիքլորիդ, կալցիումիքլորիդ (ռինգերիլուծույթ) Ռինգեր լուծույթ	ՖարմաՏեքՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111¶ Հայաստան	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ ,250մլ	հատ	240	**120000**	500	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	500	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

58	33691129/6	նատրիումիք լորիդ, կալիումիքլորիդ, կալցիումիքլորիդ (ռինգերիլուծույթ) Ռինգեր լուծույթ 500մլ	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111¶ Հայաստան	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ ,500մլ	հատ	260	**156000**	600	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	600	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
60	33691136/8	նատրիումիք լորիդ a12ca01, b05cb01, b05xa03 Նատրիումի քլորիդ լուծույթ 0,9% 250մլ	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111 Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ, 250մլ	հատ	240	**168000**	700	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	700	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
61	33691136/9	նատրիումիք լորիդ a12ca01, b05cb01, b05xa03 Նատրիումի քլորիդ լուծույթ 0,9% 500մլ	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111 Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ, 500մլ	հատ	260	**182000**	700	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	700	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
64	33691136/12	նատրիումիք լորիդ a12ca01, b05cb01, b05xa03 Նատրիումի քլորիդ լուծույթ 0,9% 100մլ	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111 Հայաստան	Նատրիումի քլորիդ, դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը. 9մգ/մլ, 100մլ	հատ	230	**18400**	80	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	80	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
65	33691138/5	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ), դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.50մգ/մլ, 250մլ	հատ	240	**168000**	700	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	700	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

			ն								
66	33691138/6	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01 Գլյուկոզա 5% 500մլ	ՖարմաՏե քՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆուփ. 111 Հայաստան	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ), դեղաձևը.լուծույթկաթիլաներարկման, դեղաչափը.50մգ/մլ, 500մլ,	հատ	260	**182000**	700	ՀՀ ք.Երևան Արշակունյաց 2	700	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

Ծանոթություն՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին
պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

***Բոլոր ապրանքները պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:**

*** Բոլոր ապրանքները մատակարարվելու են մատակարների միջոցներով, ուժերով և հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում է Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:**

***Բոլոր հղումների դեպքում հասկանալ «կամ համարժեք» արտահայտությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան:**

ԳՆՈՐ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«09»«11» 2017 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/9»-ՅԾածկագրով պայմանագր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ կիսամյակների, այդ թվում**	
			2-րդ կիսամյակ	Ընդամենը
7	33621220/20	երկաթիաղ + ֆոլաթթու b03ad	**32040**	**32040**
10	33621660/21	շնածկանլյարդիյուղ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինհիդրոքլորիդ) C05AX04	**85104**	**85104**
14	33631120/20	տերբինաֆին d01ae15, d01ba02	**88860**	**88860**
23	33651123/20	ցեֆոտաքսիմ j01dd01	**78500**	**78500**
32	33611440/3	թիամին (թիամինհիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինինատրիումականֆոսֆատ), • պիրիդոքսին (պիրիդոքսինհիդրոքլորիդ), նիկոտինամիդ A11EX	**692600**	**692600**
34	33651116/2	ցեֆազոլին j01db04	**314000**	**314000**
35	33651126/4	գենտամիցին d06ax07, j01gb03, s01aa11, s02aa14, 10s03aa07	**72636**	**72636**
42	33671130/4	դիֆենհիդրամին d04aa32, d04aa32	**72000**	**72000**
50	33691112/4	մետրոնիդազոլ a01ab17, d06bx01, g01af01, j01xd01, p01ab00	**31500**	**31500**
54	33691124/2	պիրանտել p02cc01	**5849,4**	**5849,4**
57	33691129/5	նատրիումիքլորիդ, կալիումիքլորիդ, կալցիումիքլորիդ (ռինգերիլուծույթ)	**120000**	**120000**

58	33691129/6	կալցիումիքլորիդ (ռինգերիլուծույթ)	156000	156000
60	33691136/8	նատրիումիքլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	168000	168000
61	33691136/9	նատրիումիքլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	182000	182000
64	33691136/12	նատրիումիքլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	18400	18400
65	33691138/5	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	168000	168000
66	33691138/6	գլյուկոզ b05cx01, v04ca02, v06dc01	182000	182000

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: **

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Վարչության պետ՝
Ա. Օսիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
«НАТАЛИ ФАРМ»
"NATALI FARM"